

Աշխատանքի կատարմանն աջակցել է Բրիտանական

Արևելք-Արևմուտք կենտրոնը (ԲԱԱԿ) ([www.bewc.org](http://www.bewc.org))

*ԲԱԱԿ-ը Միացյալ Թագավորությունում գործող հասարակական կազմակերպություն է, որը աջակցում է ԱՊՀ երկրներին իրավական բարեփոխումների հարցում*

## **ՏԱՄՍԵՐՆ ԸՆԴԴԵՄ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՌՈՏ ՇԱՐԱԴՐԱՆՔ**

**ԸՍՏ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 6-Ի  
ՎՃՈՒ**

2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ  
«ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԴԵՑՈՒՅՑ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ  
<<http://www.legalguide.am>>

«Տամներն ընդդեմ Էստոնիայի գործի համառոտ շարադրանքը» կազմվել է «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպության անդամ Արա Ղազարյանի կողմից, ով էլ լիովին պատասխանատու է դրանց բովանդակության համար:

. 2005 «Իրավական ուղեցույց» հասարակական կազմակերպություն և Բրիտանական Արևելք-Արևմուտք կենտրոն: Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Ներածություն

Սույն վերլուծությունը կատարվել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ »Դատարան«) կողմից 2001 թվականի փետրվարի 6-ին Տամներն ընդդեմ Էստոնիայի գործով կայացրած վճռի հիման վրա: Գործը վերաբերում է հանրային նախկին գործչին լրագրողի կողմից գրպարտելու և վիրավորանքի գործով փաստերին, որի համար լրագրողը ենթարկվել էր քրեական պատասխանատվության: Դիմումատուն պնդում էր, որ լրագրողին քրեական պատասխանատվության ենթարկելը հանգեցնում է արտահայտվելու ազատության իրավունքի խախտմանը ըստ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական Կոնվենցիայի (այսուհետ՝ »Կոնվենցիա«) 10-րդ հոդվածի: Պատասխանող պետությունը պնդում էր, որ արտահայտվելու ազատությունը բացարձակ իրավունք չէ և որ որոշակի հանգամանքներում և պայմաններում թույլատրվում է միջամտել և սահմանափակել այդ իրավունքը:

Սույն վերլուծությունը նպատակ ունի ուսումնասիրել գործի փաստերը, ներառյալ Դիմումատուի գանգատի և Էստոնիայի կառավարության հակափաստարկների բազմակողմանի վերլուծությունը: Վերլուծությունը նաև կանդրադառնա Մարու իրավունքների եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ »Հանձնաժողով«) և Եվրոպական դատարանի մոտեցումներին՝ վիճարկվող իրավունքների և ազատությունների մեկնաբանման հարցում: Գործի ուսումնասիրությունը, մասնավորապես վճռի վերլուծությունը կկատարվի թեստի կիրառման միջոցով, որով Դատարանը առաջնորդվում է Կոնվենցիայով երաշխավորված իրավունքների և ազատությունների խախտումները քննելիս: Վերլուծությունը նաև կանդրադառնա գործի էական համագամանքերին, որոնք նշանակալից դեր են ունեցել և դարձել է կարևոր ուղեցույց Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքների ու ազատությունների մեկնաբանման հարցում:

Սույն վերլուծությունը ունի ուսուցողական բնույթ և մշակվել է հիմնականում իրավաբանի մասնագիտություն ունեցողներին, այդ թվում դատավորներին, փաստաբաններին, իրավաբանական ծառայություններ մատուցողներին, ինչպես նաև նրանց ովքեր ներգրավված են մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ծրագրերում և իրավաբանական կրթություն ստացող ուսանողներին, հնարավորություն ընձեռել ծանոթանալու այն չափանիշներին և ստանդարտներին որոնցով առաջնորդվում է Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները և ազատությունները մեկնաբանելիս:

## ԳՈՐԾԻ ՈՉ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՑ ՇԱՐԱԴՐԱՆՔԸ

Մարդու իրավունքների Եվրոպական Դատարան  
Տամներն ընդդեմ Էստոնիայի  
(Դիմում համ. 41205/98)  
Ստրասբուրգ  
6 Փետրվար 2001

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը (Առաջին բաժին), Տամներն ընդդեմ Էստոնիայի գործով՝ նիստ գումարելով Պալատի դատավորների հետևյալ կազմով՝

տկն. Ե. Պալմ, Նախագահ  
պրն. Վ. Թոմասսեն,  
պրն. Լ. Ֆեռնանդի Բրավո  
պրն. Գուկար Ջորունդսոն,  
պրն. Ս. Բիրսան,  
պրն. Ջ. Կասադեվալլ, դատավորներ  
պրն. Ի. Լոհմուս, ad hoc դատավոր,  
պրն. Մ. Օ'բոյլը, բաժնի քարտուղար,  
2001թ. հունվարի 16-ի դռնփակ խորհրդակցություններից հետո ընդունեց հետևյալ վճիռը, որը հաստատվեց այդ նույն օրը.

### Վարույթը

1. Գործի համար սկիզբ է հանդիսացել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի («Կոնվենցիա») նախկին 25-րդ հոդվածի համաձայն Էստոնիայի քաղաքացի պրն. Էննո Տամների կողմից («Դիմումատու») Մարդու իրավունքների Եվրոպական հանձնաժողովին («Հանձնաժողով») 1998թ. փետրվարի 19-ին ներկայացրած դիմումը՝ (համ. 41205/98) ընդդեմ Էստոնիայի հանրապետության:

2. Դիմումատուին ներկայացնում է պրն. Ի. Գրագին՝ Էստոնիայի Տալին քաղաքի Նորդի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի դեկանը: Էստոնիայի կառավարությանը ներկայացնում են իր ներկայացուցիչներ պրն. Ե. Հարրեմոտսը՝ Եվրոպայի խորհրդում Էստոնիայի մշտական ներկայացուցչության Հատուկ խորհրդականը և տկն. Մ. Հիոն՝ Արտաքին գործերի նախարարության իրավաբանական վարչության Մարդու իրավունքների բաժնի Առաջին քարտուղարը:

3. Դիմումատուն պնդում է, որ թերթին տրված հարցազրույցի ժամանակ իր կողմից արված մի արտահայտության համար իրեն դատապարտելով՝ խախտվել է Կոնվենցիայի 10-րդ հոդվածը:

4. Դիմումը փոխանցվեց Դատարանին 1998թ. նոյեմբերի 1-ին, երբ ուժի մեջ մտավ Կոնվենցիային կից 11-րդ Արձանագրությունը (11-րդ Արձանագրության 5(2) հոդված):

5. Դիմումը հանձնարարվեց Դատարանի առաջին բաժանմունքին (Դատարանի կանոնակարգի 52(1) հոդված): Այս բաժանմունքի ներսում կազմավորվեց Պալատ՝ գործը քննելու համար (Կոնվենցիայի 27(1) հոդված) ըստ Կանոնակարգի 26(1) հոդվածի: Էստոնիայից ընտրված դատավոր պրն. Ռ. Մարուստեն նիստին մասնակցելուց ինքնաբացարկ հայտնեց (Կանոնակարգի 29(1) հոդված): Հետևաբար Կառավարությունը նշանակեց պրն. Ու. Լոհմուսին՝ նիստին որպես ad hoc դատավոր մասնակցելու համար՝ Կոնվենցիայի 27(2) հոդվածի և Կանոնակարգի 29(1) հոդված):

6. 1999թ. հոկտեմբերի 19-ի որոշումով Պալատը դիմումն ընդունելի հայտարարեց (Քարտուղարության կատարած ծանուցումը): Դատարանի որոշումը կարելի է ստանալ Քարտուղարությունից):

7. Կառավարությունը ներկայացրեց փաստերի վերաբերյալ իր գրավոր դիտողությունները (Կանոնակարգի 59(1) կետ), իսկ Դիմումատուն՝ ոչ: Կողմերի հետ խորհրդակցելուց հետո՝ Պալատը որոշեց, որ անհրաժեշտություն չկա դիմումն ըստ էության քննելու համար լսումներ անցկացնել (Կանոնակարգ 59(2)) կետ:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՍԱՆՔՆԵՐԸ

8. Գործի փաստերի հետ առնչվող ժամանակահատվածում Դիմումատուն լրագրող էր և հանդիսանում էր Էստոնիայի Պոստիմիիս օրաթերթի խմբագիրը:

9. Դիմումատուի գանգատը՝ կոնվենցիայի 10-րդ հոդվածի հիմքով, վերաբերվում է Էստոնիայի դատարանների կողմից իրեն դատապարտելուն, որի համար հիմք էր հանդիսացել տկն. Վիլյա Լաանարուին վիրավորելու հանգամանքը մեկ այլ լրագրողից՝ Ուլո Ռուսսակից հարցազրույց վերցնելու պահին, որը տպագրվել էր Պոստիմիիս լրագրում 1996թ. ապրիլի 3ին: Հարցազրույցի վերնագիրն էր՝ «Ուլո Ռուսսակը մերժում է գողության փաստը»: Իսկ հոդվածի դրդապատճառն էր հանդիսացել տկն. Լաանարուի մեղադրանքներն այն մասին, որ պրն. Ռուսսակը, որն օգնել էր տկն. Լաանարուին գրի առնել իր հուշերը, դրանք հրապարակել էր առանց իր համաձայնության: Հարցազրույցի թեմայի համար հիմք են ծառայում հետևյալ դեպքերը:

10. Տկն. Լաանարուն ամուսնացած է Էստոնիայի քաղաքական գործիչ Էդգար Սավիսաարի հետ: 1990 թվականին, երբ պրն Սավիսաարը դեռ ամուսնության մեջ էր իր նախկին կնոջ հետ, դարձավ Էստոնիայի վարչապետը: Տկն. Լաանարուն, որ մինչ այդ արդեն աշխատում էր նրա հետ, դարձավ նրա օգնականը: Հետագա տարիներին

տկն. Լաանարուն դեռ շարունակում էր աշխատել նրա հետ, և երբ պրն Սավիսաարը դարձավ Ներքին գործերի նախարար, նա դարձավ նրա խորհրդականներից մեկը:

11. Տկն. Լաանարուն ակտիվ քաղաքական դեր էր տանում Կենտրոն կուսակցությունում (Keskerakond), որի առաջնորդն էր պրն. Սավիսաարը և հանդիսանում էր կուսակցության թերթի խմբագիրը:

12. 1989 թվականին կամ այդ շրջանում տկն. Լաանարուն պրն. Սավիսաարից երեխա ծննդաբերեց: Եվ չցանկանալով երեխային տեղավորել մանկապարտեզ՝ որոշեց նրան թողնել ծնողների մոտ:

13. 1995 թվականի հոկտեմբերի 10-ին պրն. Սավիսաարը ստիպված էր հրաժարական տալ Ներքին գործերի նախարարի պաշտոնից, որի պատճառը հանդիսացավ Էստոնիայի այլ քաղաքական գործիչների հետ ունեցած իր խոսակցությանների գաղտնի ձայնագրված ժապավենների հայտնագործումը: Նույն օրը տկն. Լաանարուն հանդես եկավ մի հայտարարությամբ, որով իր վրա վերցրեց գաղտնի ձայնագրությունների ողջ պատասխանատվությունը:

14. Տկն. Լաանարուն այնուհետև թողեց իր պաշտոնը Ներքին գործերի նախարարությունում և սկսեց հուշեր գրել լրագրող պրն. Ռուսակի օգնությամբ:

15. Իր հուշերում, ինչպես նշում է պրն. Ռուսակը, տկն Լաանարուն հիշում էր քաղաքակրթությունում և կառավարությունում իր անցած տարիների մասին: Գաղտնի ձայնագրությունների մասին խոսելիս նա խոստովանեց, որ 1995թ. հոկտեմբերի 10-ի արված իր հայտարարությունը ճիշտ չէր: Ըստ պրն. Ռուսակի, նա անդրադառնում էր նաև իր հարաբերություններին պրն. Սավիսաարի հետ՝ մի մարդու, որն ամուսնացած էր և ինքն իրեն հարց էր տալիս, թե արդյոք ինքն է պատճառ հանդիսացել նրա ընտանիքը քայքայելու հարցում: Նա ընդունում էր, որ որպես մայր չի եղել այնպիսին, ինչպիսին ինքը կցանկանար լինել և հարց էր տալիս ինքն իրեն, թե արդյոք չափազանց բարձր գին չէր վճարել՝ զոհաբերելով երեխային իր կարերիային:

16. Հուշերը գրելու ընթացքում տարածայնություններ առաջացան նրա և պրն. Ռուսակի միջև՝ դրանց հրատարակման և հեղինակային իրավունքի հարցերի շուրջ:

17. Գործի փաստերով չպարզված օրը տկն. Լաանարուն Տալինի քաղաքացիական գործերով դատարան (Tallinna Linnakohus) քաղաքացիական հայց ներկայացրեց՝ որպես հուշագրությունների հեղինակ իր իրավունքների պաշտպանության հիմքով:

18. 1996թ. մարտի 29-ին Քաղաքային դատարանը որոշում ընդունեց արգելել պրն. Ռուսակին հրատարակել հուշագրությունները՝ մինչև հեղինակային իրավունքի վերաբերյալ հարցի լուծումը:

19. Ղատարանի որոշումից հետո պրն. Ռուսսակը որոշեց հավաքած նյութերը հրապարակել այլ տեսքով՝ դրանք ներկայացնելով որպես իրենց համագործակցության ընթացքում տկն. Լաանարուի կողմից իրեն հաղորդած տեղեկություններ

20. Պրն. Ռուսսակի կողմից տկն. Լաանարուի պատմության վերաբերյալ հաղորդումները սկսեցին հայտնվել Eesti Paevaleht օրաթերթում 1996թ. ապրիլի 1-ից:

21. Նույն տարվա ալելի ուշ ընկած ժամանակահատվածում տկն. Լաանարուն հրապարակեց իր սեփական հուշագրությունները: Իր գրքում նա հայտնում էր, որ պրն. Ռուսսակի կողմից թերթում հրապարակված որոշ տեղեկություններ ճիշտ չեն՝ առանց նշելու, թե որ տեղեկությունը:

22. 1996թ. ապրիլի 3-ին թերթին տված հարցազրույցում, որի մասին նշված է 9-րդ կետում, Դիմումատուն պրն. Ռուսսակին հարցեր է տալիս հուշերի հրապարակման մասին և այդ թվում հետևյալ հարցը՝

«Իմիջայլոց, չեք կարծում, որ անարժան անձնավորությունից հերոս եք սարքել: Մի մարդ, որը պատճառ է հանդիսացել այլ մարդու ընտանիքի քայքայման համար [abielulohkaja], անպետք և անուշադիր մայր, որը թողել է երեխային [rongaema]: Չի թվում, որ երիտասարդ աղջիկների համար դա լավագույն օրինակ է հանդիսանում»: (Նշում Քարտուղարության կողմից. Էստոնական ««abielulohkaja» և «rongaem» բառերի թարգմանությունը հարաբերական է, քանի որ անգլերենում մեկ բառով արտահայտված դրանց համարժեքը գոյություն չունի):

23. Վերը նշված հրապարակումից հետո տկն. Լաանարուն մասնավոր հետապնդում իրականացնելու վարույթ բացեց Դիմումատուի դեմ իր նկատմամբ «abielulohkaja» և «rongaem» բառերն օգտագործելու համար՝ իրեն վիրավորանք հասցնելու հիմքով:

24. Քաղաքային դատարանի վարույթի ընթացքում Դիմումատուն պնդում էր, որ նշված արտահայտություններն օգտագործվել էին հարցի և ոչ թե հայտարարության իմաստով, և դրանց հետևող հարցական նշանները սխալմամբ բաց էին թողնվել խմբագրելու ընթացքում: Նա մերժեց, որ նպատակ էր հետապնդում վիրավորել տկն. Լաանարուին և գտնում էր, որ արտահայտություններն օգտագործվել էին չեզոք իմաստով: Նա այնուհետև պնդում էր, որ տկն. Լաանարուի արարքները արդարացնում էին իր կողմից տրված հարցը:

25. 1997թ. ապրիլի 3-ին Քաղաքային դատարանը որոշում ընդունեց դատապարտելու Դիմումատուին Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով՝ տկն. Լաանարուին վիրավորելու հանցակազմի հիմքով և տուգանել նրան 220 կրոնով, որը համարժեք էր «օրական եկամուտի» տասնապատիկին (տե՛ս կետ 31 ներքևում): Դիմումատուի դեմ որոշում կայացնելիս դատարանը հաշվի առավ Էստոնիայի լեզվի ինստիտուտի (Eesti Keele Instituut) կողմից տրված փորձագիտական

եզրակացությունը և այն փաստը, որ Դիմումատուն չէր ցանկանում հաշտվել՝ ներողություն խնդրելով: Դատարանը նաև հաշվի առավ, որ ըստ Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթի պատասխանատվության կրելը կապված չէր այն հանգամանքից, թե արդյոք տուժող կողմը իսկապես կրում էր այն բացասական հատկանիշները, որոնք նրան են վերագրվել Դիմումատուի կողմից: Ըստ փորձագիտական եզրակացության՝ վիճահարույց բառերը հանդիսանում են գնահատող դատողություններ, որոնք արտահայտում են խիստ բացասական և դատապարտող վերաբերմունք այն երևույթի վերաբերյալ, որի վերաբերյալ դրանք օգտագործվել են: «rongaem» բառը նշանակում է, որ մայրը չի զբաղվել երեխայի խնամքով, իսկ «abielulohkaja» բառը նշանակում է մի մարդ, որը վնասել կամ քայքայման է հասցրել մեկ այլ անձի ամուսնությունը: Երկու երևույթներն էլ դատապարտելի են էստոնիայի հասարակության կողմից և դա արտահայտվում է լեզվում: Սակայն իրենց լեզվաբանական իմաստից ելնելով բառերն անպատշաճ չեն:

26. Դիմումատուն վերաքննիչ բողոք ներկայացրեց Տալինի Վերաքննիչ դատարան՝ (Tallinna Ringkonnakohus) պնդելով, *inter alia*, որ առաջին ատյանի դատարանը հաշվի չէր առել ամբողջ հողվածի բովանդակությունը, որի համատեքստում օգտագործվել էին վերը նշված բառերը: Նա նաև պնդում էր, որ իր գործողությունները չէին կարող որակվել քրեական բնույթի, քանի որ ինքը չէր հետապնդում քրեական նպատակ և օգտագործված ձևն անպատշաճ չէր: Նա այնուհետև շեշտեց, որ որպես լրագրող իրավունք ուներ ազատորեն տարածել գաղափարներ, կարծիքներ և այլ տեղեկություններ, որոնք երաշխավորված են էստոնիայի Սահմանադրությամբ և, ուստի, գտնում էր, որ առաջին ատյանի դատարանի որոշումով խախտվել էր իր ազատ խոսքի իրավունքը:

27. 1997թ. մայիսի 13-ի վճռով Վերաքննիչ դատարանը մերժեց Դիմումատուի վերաքննիչ բողոքը և ուժի մեջ թողեց Քաղաքային դատարանի դատավճիռը: Վերաքննիչ դատարանը նշեց, որ մասնավոր հետապնդում իրականացնելու գործերի քննությունը սահմանափակվում է այն պնդումների շրջանակներով, որոնք ներկայացնում է տուժող կողմը: Սակայն, հարցազրույցի տեքստն ամբողջությամբ կցվեց գործի փաստերին: Չնայած Վերաքննիչ դատարանը գտավ, որ վիճահարույց արտահայտություններն անպարկեշտ չէին, սակայն համարեց, որ դրանք խստորեն վնասում էին անձի արժանապատվությունը և դրանց օգտագործումը Դիմումատուի կողմից գործի հանգամանքների շրջանակներում վիրավորական էին: Եթե իր բացասական վերաբերմունքը տկն. Լաանարուի վերաբերյալ արտահայտեր նշելով, որ նա չէր մեծացրել իր երեխային և քայքայել էր պրն. Սավիսաարի ամուսնությունը, ապա դա վիրավորանք չէր հանդիսանա: Վերաքննիչ դատարանը նշեց, որ Սահմանադրությունը և Քրեական օրենսգրքը հստակորեն տալիս են ազատ խոսքը սահմանափակելու հնարավորություն, եթե դա վնասում է այլ անձանց հեղինակությանը և իրավունքներին: Չնայած մամուլը հատուկ ուշադրություն է ցուցաբերում հանրային դեմքերի վերաբերյալ, սակայն վերջիններս նույնպես իրենց պատվի ու արժանապատվության պաշտպանության իրավունք ունեն:

28. Դիմումատուն վճիռը բողոքարկեց Գերագույն դատարան՝ (Riigikohus) նյութական իրավունքի խախտման հիմքերով, պնդելով, *inter alia*, որ երկու արտահայտություններն էլ էստոնական լեզվում հոմանիշ չունեն և, ուստի, ինքը ոչ մի հնարավորություն չունի այլ բառեր օգտագործել: Ավելի երկար նախադասության օգտագործումը բառերի կրճատումով բացառվել է այլ օբյեկտիվ հանգամանքներից ելնելով, որոնք ներհատուկ են լրագրողական ոճին:

29. Գերագույն դատարանը իր 1997թ. օգոստոսի 26-ի վճռով մերժեց Դիմումատուի բողոքը և ուժի մեջ թողեց Վերաքննիչ դատարանի դատավճիռը: Վճռում տրված էր հետևյալ պատճառաբանությունը:

I. Ազատ խոսքի սկզբունքը, այդ թվում նաև մամուլի ազատության սկզբունքը՝ ամրագրված էստոնիայի հանրապետության Սահմանադրության («Սահմանադրություն») 45(1) հոդվածով և Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԴ) 10-րդ հոդվածով, ժողովրդավարական հասարակության գործունեության պարտադիր երաշխիքներ են և այդ պատճառով հանդիսանում են ամենաէական սոցիալական արժեքներից մեկը: ...

Համաձայն Սահմանադրության 11-րդ հոդվածի՝ ցանկացած իրավունքների կամ ազատությունների սահմանափակում կարող է կատարվել միայն Սահմանադրությամբ, նման սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և չպետք է խեղաթյուրեն սահմանափակված իրավունքների և ազատությունների էությունը: Խոսքի ազատությունը, այդ թվում նաև մամուլի ազատությունը, որպես հիմնարար իրավունք կարող է սահմանափակվել միայն ըստ Սահմանադրության 45-րդ հոդվածի՝ հասարակական կարգի, բարոյականության, այլ անձանց իրավունքները և ազատությունները, առողջությունը, պատիվն ու բարի համբավը պաշտպանելու նպատակով: ՄԻԵԴ-ի 10-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ազատ խոսքը կարող է սահմանափակվել օրենքով սահմանված կարգով՝ անձանց բարոյականությունը և արժանապատվությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակով:

II. Էստոնիայում անձը սկզբունքորեն իրավունք ունի իր պատիվը՝ որպես մարդկային արժանապատվության մի հատկանիշ, պաշտպանել՝ հարուցելով քաղաքացիական կամ քրեական վարույթ:

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի ընդհանուր սկզբունքների մասին օրենքի 23(1) հոդվածի, անձն իրավունք ունի դիմել դատարան, որպեսզի ստանա դատարանի հրամանը իր պատիվն արատավորելը արգելելու մասին, ինչպես նաև իրավունք ունի պահանջել վիճահարույց նյութի հերքում, եթե զրպարտող անձը չի կարողանում ապացուցել նյութի ճշմարտացիությունը, ինչպես նաև

պահանջել նյութական և ոչ-նյութական վնասի փոխհատուցում, որը առաջացել է իր պատվի դեմ ոսնձգության հետևանքով:

Այսպիսով, անձը կարող է քաղաքացիական հայցով իրեն պաշտպանել միայն, եթե տվյալ անձը գտնում է, որ իր պատիվն արատավորվել է փաստացի հայտարարության միջոցով, քանի որ միայն փաստը կարող է ճշմարտացի լինել: Սակայն, եթե անձը գտնում է, որ իր պատիվն արատավորվել է գնահատող դատողության միջոցով, ապա տվյալ պնդումը անհնարին է ապացուցել իրավական տեսանկյունից: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Լինգենսն ընդդեմ Ավստրիայի (1986) և Թորգեր Թորգերսոնն ընդդեմ Իսլանդիայի (1992) դատավճիռներում նույնպես ընդունել է այն կարծիքը, որ պետք է հստակ տարբերակում անցկացնել փաստերի և գնահատողական դատողությունների միջև: Քանի որ գնահատողական դատողության ճշմարտացիությունը հնարավոր չէ ապացուցել: Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը գտել է, որ եթե անձը, որը վիրավորվել է լրագրողի արտահայտած գնահատողական դատողությունից դիմում է ազգային դատարան գնահատողական դատողությունը ապացուցելու համար, սա համարվում է ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածի ազատ խոսքի իրավունքի խախտում: Այդ պատճառով, անձն էստոնիայում իրականում ոչ մի հնարավորություն չունի իր պատիվը պաշտպանել քաղաքացիական իրավունքի իրավական պաշտպանության միջոցներով, եթե նրան գրպարտել են գնահատողական դատողության միջոցով: Այստեղից հետևում է, որ նման գործերում...անձը կարող է դիմել միայն քրեական իրավունքի պաշտպանության միջոցներին՝ իր պատիվը պաշտպանելու համար հարուցելով մասնավոր հետապնդման հայց՝ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի հիմքերով: Տվյալ գործում տուժող կողմը օգտվել է իրեն տրված այս միակ հնարավորությունից:

III. Գերագույն դատարանի քրեական գործերով բաժանմունքը գտնում է, որ Տալինի քաղաքային դատարանի 1997թ. ապրիլի 3-ի և Վերաքննիչ դատարանի 1997թ. մայիսի 13-ի դատավճիռներն օրինական են և ենթակա չեն վերացման:

Ի պատասխան բողոքներում տեղ գտած փաստարկների՝ Գերագույն դատարանի քրեական գործերով բաժանմունքը անհրաժեշտ է համարում նշել հետևյալը՝

Դիմումատուի այն հայտարարությունը, որ «rongaema» «abielulohkaja» բառերը չեն կարող վիրավորական լինել տկն. Վ. Լաանարուի համար, այն իմաստով, որ դրանք որևիցե մեկի դեմ անձամբ չեն օգտագործվել, անհիմն է և մտացածին: Ե՛վ Քաղաքային դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը ճիշտ են եզրակացրել, որ «rongaema» և «abielulohkaja» արտահանությունները Դիմումատուն օգտագործել է տուժող Վ. Լաանարուին բնորոշելու համար: Գերագույն դատարանի քրեական գործերով բաժանմունքը

ցանկանում է ավելացնել, որ վիճահարույց արտահայտությունները հանրային գործիչների նկատմամբ օգտագործելն օրինական լինելու մասին իր հաջորդ փաստարկը ձևակերպելիս բողոքարկողը Վ. Լասնարունին համարում է հանրային գործիչ, այդպիսով փաստորեն արժեզրկելով իր առաջին փաստարկը:

Չնայած Սահմանադրության 12-րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուրի հավասարությունը օրենքի առջև, սակայն Չերագույն դատարանի քրեական գործերով բաժանմունքը անհրաժեշտ չի համարում հարցականի տակ դնել մամուլի հատուկ հետաքրքրվածությունը հանրային գործիչների նկատմամբ, որը Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից ընդունված սկզբունք է: Սակայն Չերագույն դատարանի քրեական գործերով բաժանմունքը ցանկանում է շեշտել, որ էստոնիայում հանրային գործիչի իրավական սահմանում գոյություն չունի, իսկ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանում ոչ ոք չի համարվել հանրային գործիչ այն պատճառով, որ հանդիսանում է հանրային գործիչի ամուսինը, նրա հետ համատեղ կյանքով ապրող անձը, երեխան կամ այլ անձ, որը մոտ հարաբերություններ ունի հանրային գործիչի հետ: Անհրաժեշտ է այնուամենայնիվ շեշտել, որ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի պրակտիկայից չի կարելի եզրակացնել, որ մամուլի հատուկ հետաքրքրվածության դրսևորումը հանրային գործիչների նկատմամբ նշանակում է, որ հանրային գործիչները չեն կարող վիրավորվել: Հակառակը, ըստ մի շարք երկրների քրեական օրենքների, ինչպես օրինակ Չերմանիայի, հանրային գործիչներին վիրավորելու արարքը համարվում է հանցանք: Հանրությունը իրավունք ունի ակնկալելու, որպեսզի մամուլը հանրային գործիչների կյանքը նկարագրի ավելի ամբողջական քան սովորական մարդկանցը, սակայն հանրությունը ոչ մի իրավունք չունի ակնկալելու, որպեսզի հանրային գործիչների պատիվը արատավորվի՝ հատկապես մամուլով և ոչ պատշաճ կերպով:

Քրեական գործերով բաժանմունքը համաձայն չէ բողոքում արժարժված այն տեսակետի հետ, ըստ որի, քանի որ «rongaema» «abielulohkaja» բառերը գռեհիկ կամ անպատշաճ չեն, ապա դրանց օգտագործումը անձին բնորոշելիս չի կարող համարվել անձի պատիվն ու արժանապատվությունը անպատշաճ կերպով արատավորող, որը հանդիսանում է հանցանքի իրավական սահմանումի պարտադիր տարր՝ ըստ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի: Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի իմաստի շրջանակներում անպատշաճ կերպը՝ որպես իրավական կատեգորիա, նշանակում է ոչ միայն գռեհիկ և անպատշաճ բառերի օգտագործումը, այլ նաև բացասական և զրպարտող փոխաբերական իմաստով արտահայտություններ: Բացի այդ, անպատշաճ կերպը կարող է արտահայտվել նաև ոչ-բառացի, օրինակ՝ ծաղրանկարը: Ե՛վ

Քաղաքային դատարանը, և՛ Վերաքննիչ դատարանը փորձագիտական եզրակացության հիման վրա ճշմարտացիորեն եկել են այն եզրահանգման, որ Վ. Լաանարուի վերաբերյալ թերթի հոդվածում «rongaema» և «abielulohkuja» բառերն օգտագործելով՝ Դիմումատուն տուժողին հանրորեն վերաբերվել է զրպարտող հայտարարությամբ, ուստի՝ անպատշաճ կերպով:

Դիմումատուի պաշտպանի այն հայտարարությունը...որ Վերաքննիչ դատարանը ոչ մի իրավունք չունի սահմանելու, թե ինչ ոճ պետք է օգտագործի լրագրողը թերթի հոդված պատրաստելիս, անհիմն է: Նման հայտարարությունն ընդունելի է, եթե լրագրողական ոճը չի վիրավորում կամ արատավորում մարդկային արժանապատվությունը: Ինչ վերաբերվում է անձի պատիվը կամ արժանապատվությունը պաշտպանելուն, ապա դատարանն իրավացի էր՝ նշելով որ անպատշաճ կերպով արտահայտված գաղափարը կարելի էր նաև էստոներեն լեզվով արտահայտել պատշաճ կերպով:

Դիմումատունի այն պնդումը, որ «rongaema» և «abielulohkuja» վիրավորական արտահայտությունները օգտագործվել էին այն պատճառով, որ էստոներենում բացակայում են դրանց հոմանիշները և որ այդ բառերից խուսափելու համար ավելի երկար նախադասություններ օգտագործելը բացառվում էր՝ ելնելով լրագրողական ոճին առանձնահատուկ օբյեկտիվ պատճառներից, նույնպես անհիմն է: էստոներենում, ըստ երևույթին, բացակայում են հոմանիշները մի շարք գռեհիկ և անպարկեշտ արտահայտությունների, սակայն այս հանգամանքը չի կարող արդարացնել դրանց օգտագործումը: Մամուլի գործունեությանը ներհատուկ օբյեկտիվ հանգամանքները, ինչպիսիք են օրինակ՝ հոդվածի զբաղեցրած տարածքը կամ տեղեկության խտությունը, որոնք ըստ բողոքարկողի այնպիսի արժեքներ են, որոնց շրջանակները սահմանափակվում են որոշակի տարածքով, այնուամենայնիվ չեն կարող համեմատվել այնպիսի արժեքի հետ, որպիսին է մարդկային արժանապատվությունը:

Ըստ Քրեական դատավարական օրենսգրքի 65(4) հոդվածի՝ վերաքննիչ և վճռաբեկ վարույթներում Գերագույն դատարանը իրավասություն չունի պարզել փաստացի հանգամանքները: Դրա համաձայն Գերագույն դատարանը չի կարող վերանայել Քաղաքային և Վերաքննիչ դատարանների այն որոշումները, որոնք ընդունվեցին փորձագիտական եզրակացության հիման վրա և ըստ որոնց վիրավորական հայտարարությունները լրագրողի կողմից համարվում էին գնահատողական դատողություն և ոչ թե հարց: Սակայն Գերագույն դատարանի քրեական գործերով բաժանմունքը գտնում է, որ անհրաժեշտ է նշել, որ իրավական գրականությունում իշխում է այն կարծիքը, ըստ որի վիրավորանք հասցնել սկզբունքորեն կարելի է նաև հարցի միջոցով: Կարևոր է նաև հատկանշել, որ եթե Postimees

օրաթերթը խախտել է հեղինակի (դիմումատուի) իրավունքները և անհմուտ խմբագրման պատճառով (երկու արտահայտությունների վերջում բաց թողնելով հարցական նշանները) աղավաղված տեսքով է ներկայացրել նրա մտադրությունները (Postimees թերթի գլխավոր խմբագրի 1996թ. մայիսի 16-ի նամակը), Դիմումատուի կամ լրագրի համար հնարավորություն է եղել վնասների փոխհատուցում ստանալ դատարանից դուրս հաշտեցում կնքելու միջոցով՝ զուտ ներողություն տպագրելով, քանի որ տուժող կողմը պատրաստակամություն էր հայտնել նման կարգավորման համար: Սակայն, ոչ Դիմումատուն և ոչ էլ Postimees թերթը ցանկություն չհայտնեցին հանրորեն ընդունելու, որ իրենք սխալ էին գործել և սա հավելյալ ապացույց է հանդիսանում առ այն, որ հիմնական նպատակ էր հետապնդվում վիրավորելը:

## II. ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՊԱՏԱԽՏԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

30. Էստոնիայի Սահմանադրության համապատասխան դրույթները նշում են հետևյալը.

Հոդված 45

«Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն արտահայտել գաղափարներ, կարծիքներ, համոզմունքներ և այլ տեղեկություն բառացիորեն, տպագիր, նկարների կամ այլ տեսքով: Այս իրավունքը կարող է սահմանափակվել պաշտպանելու համար՝ հանրային կարգը, բարոյականությունը, ինչպես նաև այլ անձանց իրավունքներն ու ազատությունները, առողջությունը, պատիվը և բարի անունը»:

Հոդված 11

«Ազատություններն ու իրավունքները կարող են սահմանափակվել Սահմանադրության համաձայն: Նման սահմանափակումները պետք է անհրաժեշտ լինեն ժողովրդավարական հասարակությունում և չպետք է աղավաղեն սահմանափակված իրավունքների և ազատությունների բնույթը»:

31. Քրեական օրենսգրքի համապատասխան դրույթները նշում են հետևյալը.

Հոդված 130 – Վիրավորանք

«Այլ անձի պատվի և արժանապատվության արատավորումը անպարկեշտ ձևով պետք է պատժվի տուգանքով կամ կալանքով»:

Հոդված 28 – Տուգանք

«1. Տուգանքը պատիժ է, որը դատարանը կարող է կիրառել մինչև անձի օրական եկամուտի ինըհարյուրապատիկի չափով: «Օրական եկամուտի» չափը

հաշվարկվում է մեղադրյալի օրական միջին աշխատավարձի հիման վրա՝ դրանցի հանելով հարկերը և հաշվի առնելով նրա ընտանեկան և ֆինանսական դրությունը»:

## **ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ**

### **ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՎԻՃԱՐԿՎՈՂ ԽԱՆՏՈՒՄԸ**

32. Դիմումատուն պնդում է, որ Էստոնիայի դատարանների որոշումներով, որով ինքը մեղավոր է ճանաչվել վիրավորանք հասցնելու մեջ, տեղի է ունեցել անարդարացի միջամտություն Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված ազատ արտահայտվելու իր իրավունքին:

#### **Ա. Միջամտության առկայությունը**

33. Դատարանը նշում է, որ անվիճելի է, որ Դիմումատուին դատապարտելը հանդիսանում է նրա ազատ արտահայտվելու իրավունքին միջամտություն:

#### **Բ. Միջամտության արդարացվածությունը**

34. Միջամտությունը չի հակասում է Կոնվենցիայի 10-րդ հոդվածին, եթե այն «նախատեսված էր օրենքով», հետապնդում է մեկ կամ ավելի իրավաչափ նպատակներ՝ ըստ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում նման նպատակի կամ նպատակների հասնելու համար:

##### *1. «Նախատեսված էր օրենքով»*

35. Դիմումատուն գտնում էր, որ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածը, որի հիման վրա իրեն դատապարտել են, ձևակերպված չէր բավարար պարզությամբ և ճշգրտությամբ:

36. Կառավարությունը պնդում էր, որ հոդվածը վիրավորանքի համար հանցանքը այնքան ճշգրտությամբ է ձևակերպել, որ Դիմումատուին հնարավորություն է տալիս դրան համապատասխան կարգավորել իր մասնագիտական գործունեությունը: Ազգային դատարանների կողմից 130-րդ հոդվածի մեկնաբանությունը և կիրառումը չի կատարվել այնպես, որպեսզի Դիմումատուն հնարավորություն չունենար խելամտության սահմաններում կանխատեսել հանգամանքները:

37. Դատարանը կրկնում է, որ «նախատեսված է օրենքով» արտահայտությունից բխող պահանջներից մեկը միջոցների կանխատեսանելիությունն է: Նորմը չի կարող «օրենք» համարվել, եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը հնարավորություն կտա քաղաքացուն իր արարքները կարգավորել: Նա պետք է անհրաժեշտության դեպքում հնարավորություն ունենա, համապատասխան խորհրդատվությունից օգտվելով, հանգամանքների ողջամտության սահմաններում

կանխատեսել այն հետևանքները, որ կարող է առաջացնել տվյալ գործողությունը: Այդ հետևանքները պարտադիր չէ կանխատեսել բացարձակ ճշգրտությամբ. փորձը ցույց է տալիս, որ դա անհնարին է: Չնայած օրենքի որոշակիությունը խիստ ցանկալի է, այն կարող է սակայն հանդես գալ քարացած տեսքով, այն դեպքում, երբ իրավունքը պետք է ի վիճակի լինի համընթաց շարժվել փոփոխվող հանգամանքների հետ: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն գործածում են այնպիսի տերմիններ, որոնք ավելի կամ պակաս չափով անորոշ են և դրանց մեկնաբանումը ու կիրառումը պրակտիկայի խնդիր է (տե՛ս օրինակ. Ռեկվենյին ընդդեմ Հունգարիայի, համ. 25390/94, կետ 34, ՄԻԵԴ 1999-III):

38. Ղատարանը նշում է, որ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածի տեքստը հանդես է գալիս ընդհանրացված տերմիններով, բայց գտնում է, որ օրենքի դրույթը չի կարող համարվել այն աստիճան անորոշ և ոչ ճշգրիտ, որպեսզի «օրենքի որակ» չկազի: Ղատարանը վերահաստատում է, որ ներպետական օրենքների կիրառումը և մեկնաբանումը առաջին հերթին ազգային մարմինների պարտականությունն է (տես օրինակ, Օտտո-Պրեմիներ-ինստիտուտը ընդդեմ Ավստրիայի, 1994թ. սեպտեմբերի 20-ի վճիռը, Շարք Ա, համ. 295-Ա, էջ. 17, կետ 45): Տվյալ գործի հանգամանքներից ելնելով՝ Ղատարանը բավարարված է, որ միջամտությունը «նախատեսված էր օրենքով»:

## *2. Իրավաչափ նպատակը*

39. Ակնհայտ է, որ վիճահարույց միջամտությունը հետապնդում էր «այլոց հեղինակությունը և իրավունքները պաշտպանելու» նպատակը:

40. Հաշվի առնելով տվյալ գործի հանգամանքները և ներպետական դատարանների վճիռները՝ Ղատարանը գտնում է, որ Դիմումատուի դատապարտումը հետապնդում էր տկն. Լաանարուի հեղինակության և իրավունքների պաշտպանության իրավաչափ նպատակ: Այդ իմաստով, գանգատարկվող միջամտությունը հետապնդում էր 10-րդ հոդվածի 2-րդ կետի իրավաչափ նպատակը:

## *3. Անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում*

41. Դիմումատուն պնդում է, որ իրեն դատապարտելը համաչափ միջոց չէր հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ և այն անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարակությունում:

42. Նա համաձայն չէր վերոհիշյալ արտահայտությունների վիրավորող որակելու հետ և պնդում էր, որ դատարանները հետևել էին Էստոնիայի լեզվի ինստիտուտի սխալ փորձագիտական եզրակացությանը: Փորձագիտական եզրակացությունը և դատարանները տարբերակում չեն անցկացրել երկու վիճահարույց բառերի միջև: «abielsulohkaja» բառը հայտարարություն էր, որը կարելի է ստուգել փաստերով, մինչդեռ «rongaema» բառը հանդիսանում էր գնահատող դատողություն: Գործի փաստացի հանգամանքները ապացուցում են առաջին բառի իսկությունը՝ տկն.

Լաանարուն հարաբերություններ էր հաստատել ամուսնացած մարդու հետ և հենց այդ հանգամանքը քայքայեց նրա ընտանիքը: Տկն. Լաանարուն իր հուշերում ընդունել էր այդ հանգամանքը: Դիմումատուն պնդում էր, որ այդ հարաբերությունները հանրությանը լայնորեն հայտնի էին: Նա ընդունում էր, որ Էստոնիայի ավանդույթներով «rongaema» բառը բավականին բացասական զգացմունքային լրացուցիչ իմաստ է պարունակում, սակայն այսօրվա լեզվի պրագմատիկ կիրառման պարագայում բառի ավանդական լրացուցիչ իմաստը հնարավոր է, որ արդեն անհետացել է: Բառը պահպանողական մեկնաբանության ենթարկելով՝ փորձագետները հաշվի չեն առել այն արմատական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել Էստոնիայի հասարակությունում վերջին հարուրամյակում միայնակ մայրության երևույթի վերաբերյալ: Ավելին, նրա հարցազրույցը հրապարակվել է ոչ թե լեզվի մասնագետների նեղ շրջանակի համար՝ այլ ամբողջ հանրության: Նույնիսկ բառի ավանդական մեկնաբանությունը մի կողմ դրեց գրեհիկ և վիրավորող լեզուն: Չնայած այդ արտահայտությունը ավելի նվազ փաստացի էր, քան «abielulohkaja»-ն, քանզի դա հիմնված էր տկն. Լաանարուի սեփական հիշողությունների վրա՝ կապված իր երեխայի հետ հարաբերությունների մասին: Քանի որ երկու վիճահարույց հայտարարություններն էլ անհամարժեք չեն դրա հիմքում ընկած փաստերին, ապա դրանք չպետք է վիրավորական համարվեն:

43. Դիմումատուն պնդում է, որ երկու վիճահարույց արտահայտությունները պարունակող հարց տալով՝ ինքը չի վիրավորել տկն. Լաանարուին: Նա նպատակ էր հետապնդում պրն. Ռուսակին դրդել և նրանից ստանալ իր հարցի պատասխանը և ոչ թե արտահայտել իր սեփական կարծիքը: Ավելին, հարցը վերաբերվում էր ոչ թե տկն. Լաանարուի անձին, այլ մամուլի վերաբերմունքին Էստոնական հասարակությունում գոյություն ունեցող որոշ տեսակի անձնավորություններին:

44. Ավելին, Դիմումատուն գտնում է, որ վեճը քաղաքացիական բնույթի էր և չպետք է քննվեր քրեական դատարանում: Նա պնդում էր, որ Գերագույն դատարանն իր 1997թ. օգոստոսի 26-ի վճռում սխալ եզրահանգման է հանգել այն մասին, որ անձի պատիվը գնահատող դատողությունից պաշտպանելու միակ հնարավոր ձևը քրեական միջոցներով է: Նա նշել է, որ 1997թ. դեկտեմբերի 1-ին Գերագույն դատարանը փոխել է իր դիրքորոշումը՝ որոշելով, որ քաղաքացիական իրավունքը հնարավորություն է տալիս պաշտպանել անձի պատիվը: Դատական պաշտպանության քաղաքացիական միջոցների առկայության պայմաններում խիստ անարդարացի է անձին դատապարտել որպես հանցագործի:

45. Դիմումատուն պնդում էր, որ տկն. Լաանարուն համարվում էր հանրային գործիչ: Մի փաստ, որը նրան մամուլի կողմից լայն քննադատության և ուշադրության կենտրոնում է պահում: Նա Էստոնիայի քաղաքական կյանքում անկախ դեր է ունեցել՝ զբաղեցնելով Ներքին գործերի նախարարի խորհրդակցականի բարձր և ազդեցիկ պաշտոնը, ինչպես նաև համարվել է ակտիվ հասարակական գործիչ և հեղինակավոր լրագրի խմբագիր: Գաղտնիության պայմաններում ձայնագրված ձայներիզների հետ կապված սկանդալի մեջ ինքն իրեն ներքաշելով՝ նա նպատակ

էր հետապնդում իր անձի նկատմամբ հանրային հետաքրքրությունն էլ ավելի մեծացնել:

46. Դիմումատուն պնդում էր, որ տկն. Լաանարուն ինքն էր պրն. Սավիսաարի առաջին անուսնությանը միջամտելու և իր երեխային հետ հարաբերությունների մասին հարցերը դարձրել հանրային քննարկման առարկա և դա ինքնին նվազեցնում է նրա անձնական կյանքի պաշտպանվածության շրջանակները:

47. Նրա հարցը ունեցել է տրամաբանական շարժառիթ և վերաբերվում է հանրային հետաքրքրություն ներկայացնող դեպքի: Այլ քաղաքական գործիչների հետ պրն. Սավիսաարի գաղտնի գրույցների փաստի հայտնաբերումը, ինչպես նաև պրն. Սավիսաարի անձի հետ կապված հակասական այլ փաստերի գոյությունը այն ժամանակահատվածում, երբ տկն. Լաանարուն համարվում էր նրա պաշտոնական խորհրատուն, իրավացիորեն այնպիսի հարցերի տեղիք էին տալիս, որոնք վերաբերվում էին էստոնիայի ղեկավար անձանց վարքագծին և բարոյական արժեքներին: Այս համատեքստում տկն. Լաանարուի անձի վերաբերյալ շիտակ և մտահոգություն արտահայտող հարցապնդումները թվում է խիստ արդարացված էին: Վիճահարույց արտահայտությունները օգտագործվել էին հանրության՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը ապահովելու և ոչ թե զուտ մարդկային հետաքրքրությունը բավարարելու նպատակով՝ առանց դրա մեջ տեսնելու որևէ տեղեկատվական արժեք:

48. Դիմողը գտնում էր, որ ինքը չէր խախտել թույլատրելի քննադատության շրջանակները և իր լրագրողական ազատությունը գերակշռում է տկն. Լաանարուի անձնական և ընտանեկան կյանքի հարգելու իրավունքին: Էստոնական դատարանների որոշումները հանգեցնում են մի տեսակ գրաքննության, որը կարող է լրագրողներին ապագայում ետ պահել նման կարգի քննադատություններից:

49. Կառավարությունը պաշտպանում էր այն տեսակետը, որ միջամտությունն անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում, կամ այլ կերպ ասած՝ այն համապատասխանում էր «սոցիալական խիստ պահանջին», համաչափ էր հետապնդվող իրավաչափ նպատակին, իսկ նման միջամտության արդարացված լինելու համար տրվող պատճառները նպատակարմար և բավարար էին: Նրանք պնդում էին, որ տվյալ գործում ներպետական մարմինները չէին խախտել նման միջամտության անհրաժեշտության գնահատման համար իրենց տրվող հայեցողության իրավունքը:

50. Նրանք պնդում էին, որ լրագրողական ազատության ավելի լայն շրջանակները քաղաքացիական ծառայողների և քաղաքական գործիչների՝ իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու վերաբերյալ, կիրառելի չեն միևնույն լայնությամբ տկն. Լաանարուի գործում: Նա քաղաքականության մեջ ակտիվ էր միայն, որովհետև համարվում էր պրն. Սավիսաարիի կինը, համախոհը և աջակցողը՝ առանց նրանից անկախ: Սովորական քաղաքացու մասնավոր կյանքի և անձնական պատմության վերաբերյալ կատարած անպատասխանատու հայտարարությունները

չէին կարող համարվել հանրային հետաքրքրություն ներկայացնող երևույթ: Քաղաքացիական ծառայությունից արդեն դուրս եկած կնոջ և այդ ժամանակ քաղաքականությունից արդեն հեռացած տղամարդու միջև հարաբերությունները խիստ անձնական հարց է և չի կարելի համարել մի այնպիսի հարց, որը կարող է ինչ որ կերպ ազդեցություն թողնել հանրության վրա: Վիճահարույց հայտարարությունները որևէ կերպ չէին կարող հանրային հետաքրքրության կամ մտահոգության տեղիք տալ: Մասնավոր անձի ընտանեկան կյանքի վերաբերյալ վիրավորական հայտարարություններ անելը ոչ մի սոցիալական նպատակ չէր հետապնդում:

51. Կառավարությունը հերքում է դիմողի այն փաստարկը, որը վերաբերվում է տկն. Լաանարուի անձնական կյանքի մասին հանրությանը հայտնելու անհրաժեշտությանը: Դիմումատուն ընտրել էր այնպիսի բառեր, որպեսզի հնարավոր լիներ կազմել սենսացիոն խորագիր և ուստի չէր գործել բարեխղճությամբ: Բոլոր դեպքերում նման փաստարկը ոչ մի կերպ չի կարող նրան ետ պահել լրագրողականության և զրպարտության օրենքների հիմնական նորմերին չհետևելու համար:

52. Կառավարությունը շեշտում էր, որ Դիմումատուն չէր դատապարտվել տկն. Լաանարուի անձի կամ նրա մասնավոր և անձնական կյանքի վերաբերյալ փաստացի հանգամանք նկարագրելու կամ քննադատական կարծիք արտահայտելու համար: Նրան դատապարտել էին տկն. Լաանարուի մասին իր ընտրությամբ օգտագործված խոսքերի համար, որոնք համարվել էին վիրավորական: Եթե Դիմումատուն տկն. Լաանարուին նկարագրեր՝ ասելով, որ վերջինս ամուսնալուծության պատճառ էր դարձել, որ ինչ որ մեկի ամուսնությունը քայքայել էր կամ չէր խնամել իր երեխային, ապա դա չէր համարվի վիրավորանք՝ ինչպես նշել է Վերաքննիչ դատարանը (տես՝ կետ 27 վերևում):

53. Կառավարությունը նշում էր, որ «rongaema» և «abielulohkuja» արտահայտությունները շատ առանձնահատուկ միտք են արտահայտում էստոներեն լեզվում և որ դրա համարժեքը անգլերենում չկա: Այս բառերը և դրանց նշանակությունը թարգմանելիս պետք է հաշվի առնել էստոներենում դրանց գործածության առանձնահատուկ նշանակությունը և մշակույթը:

54. Կառավարությունը պնդում էր, որ վիճահարույց բառերը Դիմումատուն օգտագործել էր ոչ թե, ինչպես ինքն էր պնդում, տկն. Լաանարուի՝ հանրությանը լայնորեն հայտնի անձնական կյանքի որոշ կողմեր նկարագրելու նպատակով, այլ որպեսզի նրան հանրության աչքում անարգի: Նրանք նշում էին, որ տկն. Լաանարուն իր երեխային վստահել էր մորը, քանի որ ինքը չէր ցանկանում երեխային մանկապարտեզ տեղավորել: Էստոնիայում այսօր շատ տարածված է, երբ թոռներին խնամում են իրենց տատիկները և պապիկները:

55. Կառավարությունը առարկում էր Դիմումատուի այն պնդումների դեմ, որ տկն. Լաանարուն ինքն էր իր անձնական կյանքը սարքել հանրային քննարկման նյութ:

1996 թ. ապրիլի հարցազրույցը չէր վերաբերվում տկն. Լաանարուի անձնական և ընտանեկան կյանքին, այլ հարցազրույց էր մեկ այլ լրագրողի հետ տկն. Լաանարուի հուշագրությունների և անձնական կյանքի վերաբերյալ հրապարակումների մասին: Նրանք հղում էին կատարում, որ 1996թ. մարտի 29-ին տկն. Լաանարուն ստացել էր դատարանի որոշում իր հուշագրությունները հրապարակելը արգելելու մասին: Այդ պահին նա այլևս ոչ մի ցանկություն չունեի դրանք հրապարակային դարձնել:

56. Ինչ վերաբերվում է հետաանդվող իրավաչափ նպատակին համաչափ միջոցներ կիրառելուն, ապա Կառավարությունը նշել է, որ գործը վերաբերվում է մասնավոր հետաանդում իրականացնելուն, այլ կերպ ասած, վարույթը հարուցվել է գանգատարկու տկն. Լաանարուի, ոչ թե դատախազական մարմինների կողմից: Տալինի քաղաքային դատարանը դատաքննության ժամանակ փորձել է կողմերին բերել հաշտության, սակայն Դիմումատուն մերժել է տկն. Լաանարուից ներողություն հայցելու վերաբերյալ առաջարկությունը: Չնայած հանրային մեղադրողը իրավունք ուներ մասնակցել վարույթին և դատարանը նման առաջարկ կատարել էր, սակայն հանրային մեղադրողը երբեք չմիջամտեց և որևիցե կերպ չխառնչվեց վարույթին: Գործադիրը ոչ մի կերպ չի միջամտել ազգային դատարանների աշխատանքին և ամբողջովին չեզոք պահեց իրեն ամբողջ վարույթի ընթացքում:

57. Ավելին, Կառավարությունը հայտնեց, որ Դիմումատուն ենթարկվել է միայն շատ համեստ 220 կրոն տուգանքի՝ օրական նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով:

58. Եվ վերջապես, կառավարությունը այն կարծիքին է, որ ազգային դատարանների որոշումները հիմնված էին Կոնվենցիայի 8-րդ և 10-րդ հոդվածներով տրվող իրավունքների միջև անհրաժեշտ հավասարակշռություն հաստատելու վրա: Գերագույն դատարանը, մերժելով Դիմումատուի բողոքը, կիրառել է այն նույն թեստը, ինչ՝ Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը և դրա վերաբերյալ հստակ հղում է արվել վերջինիս դատական պրակտիկային: Գերագույն դատարանն իր ամբողջությամբ պատճառաբանված դատավճռով զգուշորեն և պատշաճ կերպով հավասարակշռել է Դիմումատուի՝ իր կարծիքն ազատորեն արտահայտելու շահը տկն. Լաանարուի հեղինակությունը և իրավունքները պաշտպանելու անհրաժեշտության հետ:

59. Համաձայն դատարանի նախադեպային իրավունքի՝ արտահայտվելու ազատությունն իրենից ներկայացնում է ժողովրդավարական հասարակության հենասյուներից մեկը, նրա առաջընթացի և նրա յուրաքանչյուր անդամի ինքնաիրացման հիմնական պայմանը: 10-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջների պահպանման պարագայում խոսքի ազատությունն ընդգրկում է ոչ միայն «տեղեկատվություն» կամ «գաղափարները», որոնք նպաստավոր են կամ համարվում են անվնաս կամ չեզոք, այլ նաև այնպիսիք, որոնք վիրավորում, ցնցում կամ անհանգստություն են պատճառում: Այդպիսիք են բազմակարծության, հանդուրժողականության և ազատականության պահանջները, առանց որոնց գոյություն չունի «ժողովրդավարական հասարակություն»: Այս ազատությունը

ենթակա է 10-րդ հոդվածի 2-րդ մասում տրվող բացառություններին, որոնք պետք է, սակայն, նեղ կազմված լինեն: Յուրաքանչյուր սահմանափակման անհրաժեշտությունը պետք է համոզիչ կերպով հաստատվի (տես, օրինակ, Լինգենսն ընդդեմ Ավստրիայի դատավճիռը 1986թ. հուլիսի 8, Շարք Ա, համ.103, էջ. 26, կետ. 41, և Նիլսենն ու Ջոնսոնն ընդդեմ Նորվեգիայի, համ. 23118/93, կետ 43, ՄԻԵԴ 1999-VIII).

60. «Անհրաժեշտ» ածականը 10-րդ հոդվածի 2-րդ կետի իմաստով նշանակում է «սոցիալական սուր պահանջ»: Նման պահանջի առկայությունը որոշելիս պայմանավորվող երկրներին տրվում է հայեցողության իրավունք, բայց այն գործում է ձեռք ձեռքի տված Եվրոպական վերահսկողության հետ՝ իր մեջ պարունակելով և օրենսդրությունը և դրա վերաբերյալ որոշումները՝ նույնիսկ անկախ դատարանների կողմից ընդունված որոշումները: Այդ պատճառով Դատարանին իրավունք է վերապահված կայացնել վերջնական որոշում, թե արդյոք «սահմանափակումը» համատեղելի է 10-րդ հոդվածով պաշտպանված արտահայտվելու ազատության հետ: (տես Լինգենսի գործով դատավճիռը, էջ 25, կետ 39, և Յանովսկին ընդդեմ Լեհաստանի, համ. 25716/94, կետ 30, ՄԻԵԴ 1999-I):

61. Իր վերահսկողության գործառնություն իրականացնելիս Դատարանը պետք է վիճահարույց միջամտությունը դիտի ամբողջ գործի լույսի ներքո, այդ թվում նաև, Դինումատուի հայտարարությունների բովանդակությունն ու համատեքստը: Մասնավորապես այն պետք է որոշի, թե արդյոք քննարկվող միջամտությունը «համաչափ է հետապնդվող իրավաչափ նպատակին» և արդյոք ազգային իշխանությունների կողմից բերված պատճառները միջամտությունը արդարացնելու համար «նպատակահարմար է և բավարար» (տես. ԽանՍանդի Թայմսն ընդդեմ Միացյալ Թագավորության (համ. 1), 1979թ. ապրիլի 26-ի դատավճիռը, շարք Ա, համ. 30, էջ. 38, կետ 62, Լինգենսի գործով դատավճիռը, որից մեջբերում արվեց վերևում, էջեր 25-26, կետ 40, Բարֆորդն ընդդեմ Դանիայի, 1989թ. փետրվարի 22-ի դատավճիռը, շարք Ա, համ. 149, էջ 12, կետ 28, Յանովսկու գործով դատավճիռը, որից մեջբերում արվեց վերևում, և Նյուս Վերլագսն GmbH և CoKG ընդդեմ Ավստրիայի, համ. 31`457/96, կետ 52, ՄԻԵԴ 2000-I): Այդ անելիս, Դատարանը պետք է բավարարված լինի, որ ազգային մարմինները կիրառել են այնպիսի չափանիշներ, որոնք համատեղելի են 10-րդ հոդվածով ընդունված սկզբունքների հետ: Ավելին, որ նրանք կատարել են փաստերի ընդունելի գնահատական (տես Ջերսիլդն ընդդեմ Դանիայի 1994թ. սեպտեմբերի 23-ի դատավճիռը, շարք Ա, համ. 298, էջեր 23-24, կետ 31):

62. Դատարանն այնուհետև հիշեցնում է մամուլի առանձնահատուկ գործառնությունների մասին, որն այն իրականացնում է ժողովրդավարական հասարակությունում: Չնայած մամուլը չպետք է անցնի որոշակի շրջանականերից, հատկապես այլոց իրավունքների և հեղինակության, ինչպես նաև գաղտնի տեղեկության բացահայտումը կանխելու հարցերում, այնուամենայնիվ, դրա պարտականությունը կայանում է նրանում, որպեսզի տեղեկատվություն տրամադրի, իր պարտականությունների և պատասխանատվությունների հետ համատեղ, հանրային

հետաքրքրություն ներակայացնող բոլոր հարցերի շուրջ (տես. Ջերսիլդի գործով դատավճիռը 1997թ. փետրվարի 24-ին, էջեր 23-24, կետ 31, Ղե Հատն ու Գիյսելսն ընդդեմ Բելգիայի, 1997թ. փետրվարի 24—ի դատավճիռը, և Բլադետ Տրոմսոն և Ստենսասան ընդդեմ Նորվեգիայի, համ. 21980/93, կետ 58, ՄԻԵԴ 1999-III): Բացի այդ, Դատարանը ընդունում է նաև, որ լրագրողական ազատությունը ներառում է նաև որոշ չափի չափազանցության, կամ նույնիսկ սադրանքի հնարավորությանը (տես. Պրագերն ու Օբերշլիկը ընդդեմ Ավստրիայի, 1995թ. ապրիլի 26-ի դատավճիռը, շարք Ա, էջ. 313, էջ. 19, կետ 38, և Բլադետ Տրոմսոն և Ստենսասաի գործով դատավճիռը, որից մեջբերում կատարվեց վերևում: Թույլատրելի քննադատության շրջանակներն ավելի նեղ են սովորական քաղաքացիների նկատմամբ, քան քաղաքական գործիչների կամ կառավարությունների (տես. Կաստելսն ընդդեմ Իսպանիայի, 1992թ. ապրիլի 23, շարք Ա, համ. 236, էջեր 23-24, կետ 46, և Ինկալն ընդդեմ Թուրքիայի, 1998թ հունիսի 9-ի դատավճիռը, Ջեկույցներ 1998-IV, էջեր 1567-68, կետ 54):

63. Ի մի բերելով, պետք է նշել, որ վերահսկողության գործառնությունը կիրառելիս Դատարանի խնդիրն է իրեն ազգային իշխանությունների տեղը դնել, այլ գործը դիտելով իր ամբողջ լույսի ներքո, վերանայել ազգային իշխանությունների որոշումները 10-րդ հոդվածի ներքո՝ միաժամանակ հաշվի առնելով նրանց տրվող հայեցողության իրավունքը (տես. այլոց թվում նաև Ֆրեստոզը և Ռուարն ընդդեմ Ֆրանսիայի, համ. 29183/95, կետ 45, ՄԻԵԴ 1999-I):

64. Անդրադառնալով այս գործի փաստերին՝ Դատարանը նշում է, որ դիմումատուն դատապարտվել էր իր այնպիսի արտահայտությունների համար, որոնք նա կատարել էր լրագրողի իր պարտականությունները կատարելիս մեկ այլ լրագրողի հետ թերթի համար հարցազրույց վերցնելիս: Հարցազրույցը վերաբերվում էր տկն. Լաանարուի անձնական հուշերի հրապարակման հարցին, որն առաջացել էր իր և հարցազրույց տվող լրագրողի միջև գոյություն ունեցող վեճից, երբ վերջինս օգնել էր տկն. Լաանարուին իր հուշերը գրելիս:

65. Դատարանը նշում է, որ ներպետական դատարանները որոշել են, որ «rongaema» և «amielulohkujä» բառերը տկն. Լաանարուին վիրավորանք են հասցրել և գործադրված սահմանափակումը արդարացված էր նրա իրավունքներն ու հեղինակությունը պաշտպանելու համար (տես. 25, 27 և 29 կետերը վերևում): Մամուլի ազատության համատեքստում նման պաշտպանություն ընձեռելու պահանջները պետք է հակակշռվեն հանրային հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ և գաղափարներ տարածելու դիմումատուի՝ որպես լրագրողի շահերի հետ:

66. Այս կապակցությամբ Դատարանը նշում է, որ վիճահարույց հայտարարությունը վերաբերվում էր տկն. Լաանարուի անձնական կյանքի այն մասերին, որոնք նա նկարագրել էր իր հուշերում և որոնք նա գրել էր որպես մասնավոր անձ: Չնայած ճիշտ է, որ նա ինքն էր իր առջև նպատակ դրել այս մանրամասները դարձնել հանրամատչելի և Դիմումատուի կողմից որոշ բառերի օգտագործման

արդարացված լինելը տվյալ գործի հանգամանքներում պետք է դիտել այն համատեքստում, որը ստիպեց այդ բառերի արտասանումը, ինչպես նաև այն համատեքստում, թե ինչ արժեք են դրանք ներկայացնում ընդհանուր հանրությանը:

67. Այս կապակցությամբ Ղատարանը նկատում է, որ արտահայտություններին նախորդել էին տկն. Լաանարուի դատողություններն իր ունեցած դերի մասին որպես մայր, ինչպես նաև պրն. Սավիսաարի ընտանիքը քայքայելու հարցում: Սակայն, Ղատարանը նշում է, որ ներպետական դատարանները գտել են, որ «rongaema» և «abielulokhuja» բառերը համարվում են գնահատող դատողություն, որոնք ձևակերպվել են վիրավորական բառերով, որին անհրաժեշտություն չկար դիմել «բացասական» կարծիք արտահայտելու համար (տես. կետ 27 վերևում): Ղատարանը համարում է, որ տկն. Լաանարուի վերաբերյալ իր քննադատությունը Դիմումատուն կարող էր ձևակերպել առանց օգտագործելով նման վիրավորական արտահայտություններ (տես, օրինակ, Կոնստանտինեսկուն ընդդեմ Ռումինիայի, համ. 28871/95, կետ 74, ՄԻԵԴ 2000-VIII):

68. Ղատարանը ուշադրություն է դարձնում տկն. Լաանարուի՝ որպես հանրային գործիչ կարգավիճակի վերաբերյալ կողմերի ունեցած տարբեր դիրքորոշումներին: Ղատարանը նկատում է, որ տկն. Լաանարուն իր կառավարական պաշտոնից հեռացել է 1995թ. հոկտեմբերին՝ պրն. Սավիսաարի գաղտնի ձայներիզների վերաբերյալ դեպքերի ժամանակահատվածում, որի վերաբերյալ նա հայտարարեց, որ ինքն է կրում պատասխանատվություն (տես կետ 13 վերևում): Չնայած նա դեռ շարունակում էր մնալ կուսակցության անդամ, սակայն Ղատարանը չի գտնում, որ հաստատված է, որ տկն. Լաանարուի անձնական կյանքի վերաբերյալ օգտագործված վիճահարույց բառերը արդարացված էին, որովհետև առկա էր հանրության մտահոգությունը այդ փաստի առթիվ, կամ որ դրանք ընդհանուր կարևորություն էին ներկայացնում: Մասնավորապես, չի հինավորվել, որ նրա անձնական կյանքը այնպիսի հարց էր, որն 1996թ. ապրիլին ազդեցություն ուներ հանրության վրա: Այդ պատճառով դժվար թե Դիմումատուի արտահայտությունները կարելի լինի համարել հանրային հետաքրքրություն առաջացնող:

69. Ուսումնասիրելով, թե ինչպիսի լուծում էին գտել ներպետական իշխանությունները այս գործի վերաբերյալ՝ Ղատարանը նշում է, որ էստոնական դատարանները ամբողջովին ճանաչել են, որ տվյալ գործը վերաբերվում է գաղափարներ տարածելու իրավունքի և այլոց իրավունքների և հեղինակության պաշտպանության միջև բախումին: Ղատարանը չի կարող համարել, որ նրանք չկարողացան այս գործի շրջանակներում բախվող տարբեր շահերը պատշաճ կերպով հավասարակշռել: Հաշվի առնելով, որ նման գործերում Պայմանավորվող կողմերին տրվում է հայեցողության իրավունք, Ղատարանը գտնում է, որ ներպետական դատարանները, տվյալ գործի հանգամանքներից ելնելով, պարտավոր էին միջամտել Դիմումատուի իրավունքներին: Ղատարանը հիշեցնում է, որ միջամտության համաչափության հարցը որոշելիս պատժատեսակի բնույթը և խստությունը նույնպես համարվում են այնպիսի գործոններ, որոնք պետք է հաշվի

առնել ( տես. Ցեյլանն ընդդեմ Թուրքիայի, համ. 23556/94, կետ 37): Այս իմաստով Ղատարանը նշում է, որ Դիմումատուն ենթարկվել էր նվազագույն աստիճանի տուգանքի՝ որպես պատժատեսակ, ըստ Քրեական օրենսգրքի 28 հոդվածի (տես. կետ 31 վերևում):

70. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Ղատարանը համարում է, որ Դիմումատուին դատապարտելը անհամաչափ միջոց չի հետապնդվող իրավաչափ նպատակի համեմատ, և ներպետական դատարանների կողմից առաջ քաշված պատճառաբանությունները նման միջամտությունն արդարացնելու համար բավարար էին և նպատակահարմար: Ուստի Դիմումատուի արտահայտվելու ազատությանը միջամտելը կարելի է համարել անհրաժեշտ ժողովրդավարական հասարակությունում՝ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ կետի նշանակության սահմաններում այլոց իրավունքները և հեղինակությունը պաշտպանելու նպատակով:

71. Սրանից բխում է, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:

#### **ԱՅՍ ՀԻՄՔԵՐՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ**

*Որոշեց, որ Կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:*

Վճիռն ընդունվել է անգլերեն և գրավոր ծանուցվել է 2001թ. փետրվարի 6-ին՝ համաձայն Ղատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

Մայքլ Օ'Բոյլ  
Գրեֆյե

Էլիզաբեթ Պալմ  
Նախագահ